

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն



Մեր կանուխ փափաքին համաձայն՝ ահաւասիկ տպագրութեամբ լոյս կ'ընծայինք Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի ՕՐԱԳՐՈՒԹԻԻՆը:

Գործիս ձեռագիրը, նոյնինքն Երեմիա Չէլէպիի գրչէն ելած, առաջին անգամ մեր ուշադրութիւնը գրաւեց 1907 տարուան ամառը, երբ Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ վարդապետ Մագիստրոս (ապա արքեպիսկոպոս) եկած էր Երուսաղէմ՝ իր Հայ Ձեռագրերու Ընդհանուր Յուցակը կազմելու առթիւ մեր մատենադարանի գրչազիր հատորները աչքէ անցընելու: Մենք ևս աշխատակցեցանք իրեն ու ատիկա պատեհութիւն մը եղաւ մեզ թուահամարի տակ առնել մինչեւ այն ատեն դեռ չցուցակագրուած ձեռագիր հատորները:

Այնուհետեւ 1908 ի Օգոստոսէն սկսեալ՝ մօտ երեք տարուան բացակայութիւն մը ունեցանք Երուսաղէմէն: Մեր վերադարձին, 1911ին, խնամքով օրինակեցինք ամբողջ հատորը, որպէսզի երբ առիթ ներկայանայ՝ զայն պատրաստ ունենանք հրատարակութեան համար:

Երեմիա Չէլէպիի այս ինքնագիր հատորը, տակաւին անձանօթ հայ բանասէրներու, օրագրութեան ձեւին տակ կը պարունակէր կարի հետաքրքրական տեղեկութիւններ 1648-1662 տարիներուն պատահած ազգային, եկեղեցական, քաղաքական և այլն գէպքերու մասին և որ կարևորն է՝ կը լուսաբանէր Չէլէպիի կեանքի սկզբնական շրջանին դեռևս մուծ մնացած այլևայլ դրուագներ, ու եթէ ոչ լրիւ՝ գէթ մասամբ ծանօթութիւններ կը պարունակէր Քէօմիւրճեան գերդաստանի անդամներու մասին: